

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/1**

**9 մարտի 2016 թ.**

Քննարկվեց «Լևոն» ՍՊԸ 03.02.2016 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 25.01.2016 թ-ի թիվ 6114600 ակտի դեմ:

#### **«Լևոն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Լևոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) գտնվում է Մանանդյան 17 հասցեում և զբաղվում է սննդի կազմակերպմամբ: Ընկերությունը, ինչպես որ նախատեսված է օրենքով, 28.12.2015թ-ին վճարել է իր արտոնագրային վճարի գումարը, որպեսզի իրավունք ունենա աշխատել 2016թ. հունվար ամսին: Ընկերությունը պետք է ներկայացներ նաև ելակետային տվյալների (68 ք.մ.) մասին հայտարարություն: Ընկերությունը նշված հայտարարությունը ներկայացրել է ուշացումով: Մասնավորապես, նախ սկսվել են տոնական հանգստյան օրերը 2015թ-ի դեկտեմբերի 31-ից մինչև 2016թ-ի հունվարի 8-ը: Այնուհետև, հունվարի 9-ը և 10-ը եղել են շաբաթ ու կիրակի (ոչ աշխատանքային) օրեր, որի հետևանքով Ընկերությունը հայտարարությունը ներկայացրել է միայն 11.01.2016թ-ին:

«Լևոն» ՍՊԸ-ն իր գործունեությունը սկսել է 07.01.2016թ-ից և եղել է պատրաստի արտադրանքի վաճառք և առաքում, իսկ տարածքը չի օգտագործվել, քանի որ այն գտնվում էր վերանորոգման պրոցեսում և հասույթը գրանցվել է ՀԴՄ-ով, ինչպես նախատեսված է օրենքով: 07.01.2016թ.-11.01.2016թ. ընթացքում ՀԴՄ-ով գրանցվել է 105 հազար դրամի շրջանառություն:

Շենգավիթի հարկային տեսչությունը մեղադրում է հայտարարության ուշացման համար և առանց դրա ՀԴՄ-ով այդ գումարը տպելու համար ակտ է կազմել, ըստ որի «Լևոն» ՍՊԸ-ն տուգանվում է 737.100 դրամով: Ընկերությունը նշում է, որ հայտարարությունը ուշացումով է ներկայացվել առաջին անգամ:

Միթե միայն հայտարարության ուշացման համար կարելի է փակման շեմին կանգնած Ընկերությանն այդքան մեծ գումարով տուգանել: Միթե այդպես է պետք խթանել, օգնել միջին և փոքր բիզնեսին:

Ընկերությունը հայտնում է, որ չի կարող այդքան մեծ գումար վճարել և կանգնած է բիզնեսը փակելու խնդրի առաջ:

Եթե նույնիսկ Ընկերությունը ուշացրել է հայտարարություն ներկայացնելը, ապա դրանով պետությանը ոչ մի դրամի վնաս չի պատճառվել:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է ուսումնասիրել գանգատը, միջամտել այս ծանր տուգանքից ազատելու և Ընկերությունը չփակելու հարցում:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 18.01.2016թ-ի թիվ 6114600 հանձնարարագրի համաձայն «Լևոն» ՍՊԸ-ում կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 25.01.2016թ-ի թիվ 6114600 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 737.100 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը ք.Երևան, Մանանդյան 17 հասցեում իրականացրել է հանրային սննդի կազմակերպման գործունեություն, որի սպասարկման սրահի մակերեսը կազմում է 68 քմ: Ընկերությունը 2016թ. հունվար ամսին արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը Շենգավիթի ՀՏ է ներկայացրել 2016թ-ի հունվարի 12-ին, սակայն 2016թ-ի հունվարի 1-ից մինչև 11-ն ընկած ժամանակահատվածում գործունեություն է իրականացրել առանց համապատասխան արտոնագրի՝ խախտելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի պահանջները: Նշված ժամանակահատվածում ՀԴՄ-ից դուրս բերված «Z» հաշվետվության տվյալների համաձայն ընկերության շրջանառությունը կազմել է 105.1 հազ. դրամ:

Նշված խախտման համար կիրառվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված տուգանքը և լրացուցիչ գանձման է առաջադրվել 737.100 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետով հստակ սահմանված է, որ արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը որևէ ժամանակահատվածի (օրացուցային տարվա ընթացքում ընտրված ցանկացած ամիս կամ հաջորդական ամիսների հանրագումար, բայց ոչ ավելի, քան մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում նույն հավելվածի N 1 ձևով սահմանված հայտարարություն:

Նույն հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի N 2 ձևին համապատասխան: Ընդ որում, հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն հավելվածի N 2 ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, սույն հավելվածի 16-րդ կետին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի վճարում:

Իր հերթին, «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում նույն օրենքի N 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ առանց արտոնագրի գործունեությունը փաստացի իրականացնելու ժամանակահատվածի (բայց ոչ պակաս երեք ամսվա) համար սույն օրենքի N 8



հավելվածով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի:

Քննարկվող դեպքում Ընկերությունն առանց «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարություն ներկայացնելու և արտոնագիր ստանալու 2016թ. հունվարի 1-ից մինչև 11-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է արտոնագրային վճարով հարկվող գործունեություն: Այսինքն, խախտվել են «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի Հավելված 8-ի 5-րդ կետի պահանջները, որի համար կիրառվել է նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

### **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 25.01.2016թ-ի թիվ 6114600 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**